կամիմ զկղզիս զայս շինեմք տեղ քան նոյեան[1] տապանն, զի ի յետ ժամանակաց ի բազմանալ տաճկաց, թէ գան ի վ՟ր հայոց, փախեն և մտանեն յաղթամար ի ձեռաց անօրինաց, ամրանան այս կղզին և ազատին ա՟վ.

Յառաջ[2] եկաց ղուկաս մ՟րդպտն և տ՟ր մովսէս եպ՟սն հանդերձ ա՟մ զօրօքն, որ եկեալ էին ի տես Թագաւորին, և ասացին. բարի և իմաստուն խորհուրդ ես արարեր. տ՟ր ա՟ծ կատարէ զխնդիրս քո. եւ ամէնքս աղաչենք[3] զքեզ որ զէտ բանըդ առնես քեզ յիշատակ մինչև ի կատարած աշխարհիս։ Եւ քեզ ա՟ծ ողոր

մի

**16.** ողորմի ասեն և քո ծնօղացն որ[4] յամէն աշխարհէ գան մտանեն յաղթամ՟ր ազատին ի ձեռաց այլազգաց[5]։

Իբրև լուաւ Թ՟գ՟ւրն զբանս[6] որ ասացին ե՟պսքն մ՟րդք և ա՟մ ազատորդիքն, յոյժ ուրախացաւ Թագաւորն։ Եւ հրովարտակ առաքեաց յ՟ամ աշխարհաց գալ բազում արուեստաւորք և ճարտարք,[7] և բազում ամբոխիւք։ Յայնժամ առեց արքայն զլար ճարտարութե՟ ի յիւր ձեռն հանդերձ ա՟մ վ՟ր՟դ՟պտօք։ Եւ ասաց Թագաւորն. ի ծովու խորունդ տակն ձգեցէք, զհիմն յիրար կցեցէք. և այնպէս արարին, բազում արուեստով ի ծովու մէնջ (= մէջ) քար և[8] կիրն՝ խիճն. եւ շիտակու՟ի էր ահեղ և զարման՟լի։

---

1 Զ. ե և երկրորդ ն տղմ.

2 Զ. շրն.

3 Զ. Նախնական ձևը անորոշ, հաւանօրէն աղաչ(եց)ինք.

4 Զ. որ-ից յետոյ յե ջնջուած.

5 Զ. տղմ. նոտրգ.

6 Զ. ս տղմ.

7 Զ. Նխպ. արուեստաւորք և ճարտարք, օ-երը ջնջուած. հմ. յաջորդող ամբոխիւք գործիականի հետ.

8 Զ. եւ-ից յետոյ կար ջնջ. նշ.